№ 14. Ապրիլի 19. — 1875 — Ապրիլի 19 № 14.

ՇԱԲԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի գիտեն այս հասցեով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թերեթասում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (որթրոնաց առն) և պ. Գասպարեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հազարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպւում են հայերէն, թուրքերէն, վրացերէն, ֆրանսերէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքային ինքնակառավարութիւն։—Ներքին տեսութիւն։ Փոխատու ընկերութիւններ Ռուսաստանում։ Քաղաքային վարչութեան կազմից։ Նամակ Դանձակից։ Նամակ Ջաբախալից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։ Թիւրքիա։ Պարսկաստան։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Կիւմրուից։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Արդէն 1870 թուի յունիսի 16-ից Ռուսաստանի քաղաքների մեծ մասը վայելում էին շնորհված ինքնակառավարութիւնը։ Ինչ որ վերաբերում է Մոսկվա և Պետերբուրգ մայրաքաղաքներին, առանձին հանգամանքների շնորհով, նրանց ինքնակառավարութեան ձևը տարբերվում էր նահանգական (օբլաստնոյ) քաղաքներին տուած կանոնադրութեան ձևից։

Այժմ կատարվում են Ռուսաստանում վերանորոգութիւնները և մայրաքաղաքներին արվում է ինքնակառավարութեան նոր կանոնադրութիւն։

Թէև մեր լրագրի շրջանը այնքան ընդարձակ չէ, որ մենք կարողանայինք նուիրել նրա էջերը մեր ընթերցողներին յիշեալ կանոնադրութեան հետ մանրամասնաբար ծանօթացնելու համար, բայց դարձեալ մեր պարտաւորութիւն ենք համարում քանի մի տեղեկութիւններ տալ այդ մասին։ 1)

Ներկայ յօդվածիս շրջանը սահմանափակված լինելով, մեզ այնքան չի հետաքրքրի քաղաքային վարչութեան անդամների ընտրութեան ձևը, նրանց իրաւունքները, քաղաքագլուխի ընտրութիւնը, նրա յարաբերութիւնը դէպի գաւառապետը կամ մի քանի քաղաքներում (Պետերբուրգ և Օդէսա) դէպի քաղաքապետը (գրաժդանսկոյ նաչալնիկ), գուբերնատորի (գաւառապետի) հսկողութեան իրաւունքը քաղաքային վարչութեան վրա,—այլ մեզ գլխաւորապէս պիտի այդտեղ հետաքրքրի ինքնակառավարութեան տնտեսական կողմը։

Մինչև վերջին ժամանակը քաղաքային վարչութիւնը քաղաքի բարեկարգութեան 2) և բնակիչների բարեկեցութեան 3) կողմից շատ կրաւորական իրաւունքներ ունէր, կամ աւելի ճիշդ ասենք՝ նա չունէր այդ կողմից ոչինչ անմիջական ներգործութիւն։

Քաղաքային վարչութեան բոլոր պարտաւորութիւնը կայանում էր մինչև այժմ միայն նորա մէջ, որ քաղաքային գանձից տայ այս կամ այն պահանջմունքին հարկաւոր գումար։ Բայց քաղաքի բարեկարգութեան և նրա բնակիչների բարեկեցութեան ճշմարիտ հոգսը պատկանում էր նահանգի և քաղաքի բարձր կառավարութեան և պոլիցիային։ Վերջինը ոչինչ անմիջական յարաբերութիւն չունէր քաղաքային վարչութեան հետ և անկախ էր գործում, այնպէս որ շատ անգամ անուղղակի հարկերի միջոցով, բնակիչներին աւելորդ ծախսերի մէջ էր գցում։ Օրինակի համար, մի քաղաք որ հարկ է տալիս, իրան իրաւունք է համարում պահանջել, որ գոգերից և աւազակներից ազատով լինի, բայց չը նայելով այդ հարկին պոլիցիան (ինչպէս և պատահած է Մոսկվայում) պահանջում է բնակիչներից առանձին վարձ, պարտաւորեցնելով նրանց առանձին դունապաններին պահել, որ բազմութեան համար նիւթապէս ծանր է։

Ուրիշ օրինակ՝ մինչև որ խոլերան չէր յայտնվում Մոսկվայում, փողոցները, գաւիթները և այլն սաստիկ անմաքուր էին մընում, սպանդանոցներում արիւնը և կենդանիների մնացորդները փտում էին և այլն,—երբ յայտնվեցաւ խոլերան, այն ժամանակ քաղաքային վարչութեանը իրաւունք տրվեցաւ առանձին հոգաբարձուներ ընտրել իր պատգամաւորների միջից, որոնց գործունէութեանը օգնելու նշանակվեցան բժիշկներ, տրվեցան գումարներ և հրաման տրվեցաւ պոլիցիային պատրաստ լինել նրանց ամեն կարգադրութիւնները կատարելու։ Հիւանդութիւնը անցաւ և ամեն բան հին վիճակի մէջ ընկաւ։

Հին քաղաքային կանոնադրութեան պակասութիւնը իսկ նրանում էր կայանում, որ քաղաքի վարչութեան և պոլիցիայի իրաւունքները ու պարտաւորութիւնները միմեանց հետ չէին համաձայնում, միմեանցից անկապ էին և շատ անգամ միմեանց հակառակ։

Նոր կանոնադրութիւնը ընդհակառակն ունի այն արժանաւորութիւնը, որ նա պիտի փորձի հաշտեցնել երկու իրար թէ թշնամական սկիզբները, քաղաքի վարչութեան և պոլիցիայի, որք իսկապէս մին մինին պիտի լրացնեն, պիտի ճանաչէ քաղաքային վարչութեան իրաւունքը անմիջապէս ներգործելու այն ամեն բաներում, որք բնակիչների բարեկեցութեան և քաղաքի բարեկարգութեան գործին են վերաբերում, թոյլ տալով նրան կանոնադրութեան 103 յօդվածի զորութեամբ այդ մասին բնակիչների համար պարտադիր կարգադրութիւններ հրատարակելու։

Այնպէս որ նոր ինքնակառավարութեան զօրութեամբ, բոլոր կարգադրութիւնները և գործ դնելու միջոցները, սկսած բնակիչների կեանքի ապահովութենից և արվեստաւոր դասի պաշտպանութենից, մինչև փողոցների վրա կառքերի շրջելը և փողոցներ աւելելու հոգատարութիւնը կախված կը լինեն ոչ թէ միայն պոլիցիայից, որ ա։ հասարակ պատասխանատու չէ լինում հասարակութեան առջև, այլ և գումայից (քաղաքային վարչութենից)։ Վարչութեան պարտաւորութիւնները բազմանում են, ուրեմն պատասխանատուութիւնը մեծանում է, բայց ուրիշ կողմից և պոլիցիայի կամայականութիւնը նուազում է և նա ոչինչ կարգադրութիւն անել չի կարողանայ առանց քաղաքային վարչութեան համաձայնութեան։

Վերջացնում ենք յիշելով մի նոր և նշանաւոր անտեսական իրաւունք, որ արվում է քաղաքային վարչութեանը նոր կանոնադրութեան դրութեամբ, այն է փոխառութիւն (զայոմ) անելու իրաւունքը։

Քաղաքին իրաւունք է տուած, առանց տէրութեան թոյլտուութեան փոխառութիւններ անել, այն պայմանով որ փոխ առած գումարը չը գերազանցի քաղաքի նախընթաց երկու տարվայ մուտքի գումարից։ Եթէ անելու փոխառութեան գումարը գերազանցելու է յիշեալ քաղաքային գումարներից,—այն ժամանակ պիտի մինիստրութենից խնդրվի թոյլտուութիւն, որ վավերացնելով փոխառութեան պայմանները պիտի տեղեակ լինի՝ ինչ ապրիւրներից քաղաքը դիտաւորութիւն ունի տարից տարի վճարել իր յանձն առած պարտաւորութիւնները։

Յայտնի է որ մինչև այժմ երբ քաղաքային վարչութիւնը դիտաւորութիւն ունէր մի որ և է ձեռնարկութիւն գլուխ բերելու, գոյծ էր դնում մնացող կապիտալ անուանված գումարը, որ շատ անգամ այլ ինչ չէր եթէ ոչ այս կամ այն մտադրած ձեռնարկութեան վրա չը գործ դրած փողը, կամ անցեալ տարվայ մուտքից մնացած ապառիկները։ Հասկանալի է, որ այդ տեսակ գումարներով երբէք չէր կարելի գլուխ բերել ձեռնարկութիւնների մեծ մասը, երբ շատ անգամ նրանց իրագործման համար չեն բաւականանում քաղաքի առ ձեռն ունեցած ամբողջ գումարներն անգամ։

Օրինակ սառերկրեայ ջրանցքների սիստեման իրագործվելու է (այդ ամենքին յայտնի է) միայն փոխառութեան օգնութեամբ։

Բայց մեզ կը հարցնեն՝ ինչ բանին կը գործ դրվին մնացող կապիտալները։

Նորա առ հասարակ շատ աննշան են, և ճիշդ խօսելու համար իսկապէս էլ չը կան, որովհետև շատ անգամ անցեալ տարվայ չը կատարած ձեռնարկութիւններից մնացած փողերը ամբողջութեամբ գործ են դրվում միւս տարվայ ձեռնարկութիւններին,—իսկ եթէ ճշմարիտ էլ տարից տարի ընթացող մուտքից կազմվի մնացող գումարը, այն ժամանակ նոր կանոնադրութեան 125 յօդվ. զօրութեամբ քաղաքը կարող է մտցնել յիշեալ գումարը թէ թաղաւորական թէ մասնաւոր բանկ շահեցնելու համար և դարձնել նրան տոկոսաբեր թղթերի։ Սացած տոկոսներով կարելի կը լինի լրացնել նոյն իսկ փոխառութեան պահանջներին։

---

1) Հրաւիրում ենք ռուսերէն իմացողներին կարդալ Отечественныя записки ամսագրի ներկայ տարվայ մարտի տետրակը։

2) Փողոցների խնամելը, մաքրելը, հրապարակական այգիների խնամքը, ջրանցքների, անմաքրութեան խոզովակների, կամուրջների չինելը, փողոցներ լուսաւորելու հոգսը և այլն։

3) Այսինքն խնամքը բնակիչներին ուտեստ ապահովելու, բաղարներ հիմնելու, դանագան անբարգ դիպվածներին, կրակին, հիւանդութիւններին առաջն առնելու, տեղական վաճառականութեան նպաստելու և պաշտպանելու և այլն։

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուս „Иллюстрированная Недѣля“ շաբաթաթերթը տալիս է մեզ հետևեալ տեղեկութիւնները Ռուսաստանի մէջ հաստատված գիւղական փոխատու ընկերութիւնների ներկայ դրութեան վրա։

Փոխատու ընկերութիւնների գործունէութեան հաշիւը որ նորերում տպվեցաւ ռուս լրագիրներում կարող է համարվել ամենալաւ պատասխան այն բոլոր մեղադրանքներին, որք դեռ շատ ժամանակ չէ թափվում էին այդ օգտաւէտ ժողովրդական հիմնարկութիւնների վրա։ Յետադէմ անձանց կարծիքով փոխատու ընկերութիւնները ոչ թէ միայն գիւղացուն օգուտ չեն բերի, այլ կը լինեն նորա բարոյական և տնտեսական անկման պատճառ։ Դեռ անցեալ տարվայ մարտ ամսին իշխան Ա. Վասիլչիկովը, ռուս տնտեսական ընկերութեանը ներկայացրած ծրագրի մէջ խօսելով փոխատու ընկերութիւնների մասին, վերջացնում էր իր առաջարկութիւնը հետևեալ խօսքերով՝ ժողովրդին, ամբոխին էժան կրեդիտի միջոցները մերժել, նոյն է թէ նրան զրկել արդար դատաստանների հիմնարկութիւնից։

Այդ խօսքերը՝ ի հարկէ հաճելի չէին պահպանողական անուանված կուսակցութեանը, աւելացնում է լրագիրը և նրանք յարձակվեցան ընկերութիւնների ներկայ ձևի վրա, մի և նոյն ժամանակ չը կարողանալով ցոյց տալ մի աւելի յարմար ձև։

Այժմ ռուս շաբաթաթերթը կրկնում է այն թուանշանները, որ մենք տպեցինք անցեալ տարվայ „Մշակի“ 47-որդ համարում, քաղելով ռուս „Новости“ լրագրից։

Ռուսաստանում կան այժմ 175 գիւղական փոխատու ընկերութիւններ, և նրանց այդ թիւը ցոյց է տալիս որքան յարմար են նրանք ժողովրդի ժամանակակից պահանջներին։

Նրանց այդ ընդարձակումը և գաղափարի սիրալիր ընդունելութիւնը, ասում է ռուս շաբաթաթերթը, ակներև հաստատում է իշ. Վասիլչիկովի խօսքերի ճշմարտութիւնը։ Եթէ պ. Շուլցէ-Ֆօն-Դէլիչի գաղափարով հիմնած այդ ընկերութիւնները ասում է իշ. Վասիլչիկովը, օգտաւէտ են համարվում Գերմանիայում, որտեղ աշխատողների մեծ առատութիւնը բաղկանում է գործարանների մշակներից, տուն, կայք և հող չունեցող քաղաքային և գիւղական աշխատող դասից,—որքան ուրեմն աւելի օգտաւէտ և արդիւնաւոր պիտի լինեն նրանք Ռուսաստանում, որտեղ ամբոխի մեծ մասը կազմված է հող ունեցող երկրագործ դասից։ Եթէ Լասալը, շարունակում է նա, ընդիմադրում էր Շուլցէ-Դէլիչի գաղափարին, այդ այն պատճառով էր, որ ընկերակցութիւնները առհասարակ նպաստում են աւելի մանր վաճառականներին, որոնք հստաւորաէրերին, քան թէ ժողովրդի բազմութեանը,